

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԵՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ՀԵՄԻՆԳՈՒԵՅԻ «ԶԻՆՎՈՐԻ ՏՈՒՆԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

Սոսի Խանիկյան
Երևանի պետական համալսարան

Պատերազմի թեման իր ծավալուն անդրադարձն է գտել 20-րդ դարի ամերիկյան գրականության մեջ: Այն տիրապետող թեմա է Է. Հեմինգուեյի փոքր արձակույթ: Հոդվածում քննարկվում է, թե Հեմինգուեյը խորհրդանիշների միջոցով ինչպես է նկարագրում հետպատերազմական կյանքը, դրա անդառնալի հետևանքները հերոսի կյանքում: Հոդվածը ներկայացնում է նաև, թե ինչպես են խորհրդանիշների միջոցով բացահայտվում հերոսի ապրումները, զգացումներն ու հոգեվիճակը, հերոսի օտարացումն աշխարհից և հասարակությունից, բարդ հարաբերություններն ընտանիքի և ինքն իր հետ:

Բանալի բառեր. Պատերազմի խորհրդանիշներ, պատերազմի ազդեցություն և հետևանքներ, հերոսի օտարացում, կորուսյալ սերունդ:

Ներածություն

Այս հոդվածի նպատակն է ցույց տալ, թե Է. Հեմինգուեյն ինչպես է օգտագործում պատերազմական թեմայով խորհրդանիշները «Զինվորի տունը» պատմվածքում:

Մեծ գրողների կյանքում հաճախ այնպես է պատահում, որ իրենք գրում են իրենց ապրածի մասին: Անցած կյանքն ուղղակի կամ անուղղակի կերպով անդրադառնում է նրանց ստեղծագործությունների թեմատիկայի վրա: Հոդվածում խոսվում է այն մասին, թե կոնկրետ պատերազմն ինչ անդրադարձ է ունեցել գրողի «Զինվորի տունը» պատմվածքում, և ինչ խորհրդանիշներ է գրողն օգտագործել ցույց տալու համար այդ անդրադարձը:

Հեմինգուեյի կյանքի զգալի հատվածն անցել է պատերազմների մեջ (Առաջին համաշխարհային պատերազմ, թուրք-հունական բախումներ, Իսպանական քաղաքացիական պատերազմ, Երկրորդ համաշխարհային պատերազմ), և բնականաբար պատերազմի թեման չէր կարող չըջանցել Հեմինգուեյի արձակը: Այն ոչ միայն չի շրջանցել, այլև տիրապետող է դարձել Հեմինգուեյի ինչպես փոքր, այնպես էլ մեծ արձակում:

Ջոն Քենեդիի անվան նախագահական գրադարանի և թանգարանի տնօրեն Թոմաս Փուտմանն իր` «Հեմինգուեյը պատերազմի ժամանակ և դրա հետևանքները» հոդվածում իրավամբ նշում է, որ 20-րդ դարի առաջին կեսին ոչ մի ուրիշ ամերիկյան գրող իր գրվածքներով այնքան չի կապվում և նույնացվում պատերազմի հետ, որքան Է. Հեմինգուեյը` «Նա տեսել է այդ ամենն անձամբ, անհամար գրություններ ուղարկել պատերազմական ճակատներից, և այդ ամենն օգտագործել է որպես հիմք իր բազում հիշարժան գործերի համար» (Putman 2006):

Պատերազմի ազդեցությունը Է. Հեմինգուեյի ստեղծագործություններում

Դժվար է չհամաձայնվել Փուտմանի հետ: Հեմինգուեյն այնպես է գրում պատերազմի մասին, որ նրա ամեն մի խոսքը թվում է իրականություն: Պատերազմին մաս-

նակցելու առաջին իսկ փորձը շատ բան փոխեց երիտասարդ Հեմինգուեյի կյանքում և աշխարհայացքում: Այդ փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև նրա արձակուրդ, հետագա ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում:

Պատերազմի մասին նրա կարճ պատմվածքները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի. պատմվածքներ, որտեղ ներկայացվում են բուն պատերազմական գործողություններ, պատմվածքներ, որտեղ խոսվում է հետպատերազմական կյանքի մասին /հաճախ բուն պատերազմի մասին խոսք անգամ չկա/, և կորուսյալ սերունդը պատկերող պատմվածքներ, որոնք կարծես հետպատերազմական կյանքը պատկերող երկրորդ խմբի պատմվածքների շարունակությունը լինեն:

Ինչպես էլ որ ներկայացնի Հեմինգուեյը պատերազմը, պատկերի նրա արհավիրքները, ազդեցությունը հետպատերազմական կյանքի վրա, հեղինակի համար առաջնայինը մարդն է: Հեմինգուեյի համար կարևոր է ցույց տալ, թե ինչպես է պատերազմն ազդում մարդու ֆիզիկական և հոգևոր ներաշխարհի վրա, ինչպես է անվերադարձ փոխում նրան և նրա կյանքի ընթացքը, մարդկային հասարակ հարաբերություններն ու արժեքները: Այդ փոփոխություններն իր վրա զգում է նաև Հեմինգուեյը:

Հետագայում գրողը «Մարդիկ պատերազմի ժամանակ» ժողովածուի նախաբանում գրում է. «Երբ դու գնում ես պատերազմ երիտասարդ տարիքում, դու ունես քո մեջ անմահության պատրանք: Ուրիշ մարդիկ կզոհվեն, բայց ոչ դու: Հետո, երբ առաջին անգամ ծանր վիրավորվում ես, դու կորցնում ես այդ պատրանքը և հասկանում, որ դա կարող է պատահել նաև քեզ հետ: Իմ տասնիններորդ տարեդարձից երկու շաբաթ առաջ ծանր վիրավորվելուց հետո, ես դժվար ժամանակներ էի ապրում, մինչև հասկացա, որ ինձ չի կարող պատահել ոչ մի այնպիսի բան, որը նախքան ինձ պատահած չլինի բոլոր մնացած մյուս մարդկանց հետ: Ինչ էլ, որ ես անեմ, մարդիկ միշտ էլ արել են դա: Եվ եթե նրանք արել են, ապա ես էլ կարող եմ անել դա: Եվ լավագույնը, ինչ ես կարող եմ անել, այդ մասին չանհանգստանալն է» (Putman 2006):

Պատերազմի մասին այն ռոմանտիկ պատկերացումները, որ ուներ Հեմինգուեյը մինչև պատերազմ մեկնելը, անհետանում են վիրավորվելու պահից սկսած: Հենց այդ պահից Հեմինգուեյն արդեն այլ, իմաստնացած և պատերազմը ժխտող աչքերով է սկսում նայել պատերազմին: Եվ պատերազմի մասին այդ պատկերացումն ընդմիշտ արտացոլվում է նրա արձակուրդ:

Հեմինգուեյի արձակուրդ քաջածանոթները գիտեն, որ պատերազմի մասին իր ամենափոքր պատմվածքից մինչև բազմածավալ վեպերը, նա միայն բացասական տեսանկյունից է ներկայացնում պատերազմը: Հեմինգուեյն այդքան շատ է անդրադառնում պատերազմին, քանի որ ուզում է ցույց տալ, թե ինչ սարսափելի, նողկալի երևույթ է այն, և ինչքան վտանգավոր են դրա հետևանքներն անհատի և ողջ մարդկության համար:

Հիվանդանոցում գտնվելու ընթացքում վիրավորված գրողը սիրավեպ է ունենում հիվանդանոցի բուժքրոջ՝ Ագնես Ֆոն Կուրովսկու հետ: Հենց այս սիրավեպն էլ հիմք է դառնում Հեմինգուեյի «Հրաժեշտ զենքին» վեպի և «Շատ կարճ պատմություն» փոքրիկ պատմվածքի համար: Եվ թեպետ, որպես ինքնակենսագրական ստեղծագործություն ավելի շատ խոսվել է «Հրաժեշտ զենքին» վեպի մասին, բայց «Շատ կարճ պատմություն» պատմվածքն ավելի է համապատասխանում գրողի ապրած կյանքի դեպքերին:

Պատերազմական Եվրոպայից գրողը վերադառնում է հայրենիք ամբողջովին փոխված, ուրիշ մարդ դարձած, մինչդեռ իր հայրենի քաղաքը մնացել էր նույնը:

Իր այդ ապրումները, իրականության հետ բախումները, տեղեկությունն այն մասին, որ Ազնեսն ամուսնանում է ուրիշ մարդու հետ, հետագայում՝ տարիներ անց, հիմք են դառնում երկու կարճ՝ «Ջինվորի տունը» և «Մեծ երկսիրտ գետը» պատմվածքների ստեղծման համար:

Պատերազմի խորհրդանիշները «Ջինվորի տունը» պատմվածքում

«Ջինվորի տունը» համարվում է կիսահինքնակենսագրական պատմվածք: Ռոբերտ Վ. Լյուիսի խոսքերով պատմվածքի հերոսի և հեղինակի միջև նմանությունները շատ են: Հեմինգուեյն էլ իր հերոսի պես պատերազմից վերադարձից հետո խնդիրներ ուներ ընտանիքի հետ, նա էլ էր բախվել ամերիկյան կյանքի կեղծ արժեքներին և ազատության խնդրին (Lewis 1975:179): Շատ քննադատներ, այդ թվում նաև Մայքլ Մեյերը նշում են, որ պատմվածքը գրված է պարզ, առանց պաշտոնական խոսքի, և խորհրդանիշներն ու փոխաբերությունները գրեթե բացակայում են (Meyer 2005): Սակայն գրողին, իրեն հատուկ ոճով, հաջողվել է պատմվածքին տալ թաքնված իմաստ: Պատմվածքում չկան ուղղակի նկարագրություններ պատերազմի մասին, և թե ինչպես է այն ազդել գլխավոր հերոսի՝ Կրեբսի վրա: Սակայն մենք տեսնում ենք ամեն ինչի հանդեպ անտարբեր մի մարդու, որը վերադարձել է պատերազմից հայրենի քաղաք, և թեև քաղաքը բոլորովին չի փոխվել, բայց այնտեղ ամեն բան խորթ է իրեն: Պատճառն այն է, որ քաղաք է վերադարձել արդեն լրիվ ուրիշ մարդ, պատերազմի պատճառով բոլորովին փոխված մի մարդ: Նա վերադարձել է մյուս բոլոր գինվորներից մի փոքր ուշ և չի վայելել բոլոր այն շքեղ ընդունելությունները, որով դիմավորել են պատերազմից վերադարձողներին: Մարդիկ արդեն կամաց-կամաց մոռանում են պատերազմի մասին, և նրանք անգամ ժամանակ ու ցանկություն չունեն լսելու Կրեբսի պատմությունները պատերազմական կյանքի մասին:

Հավանաբար, պատմվածքում ամենացայտուն խորհրդանշային իմաստը պարունակում է պատերազմի մասին գիրքը, որը Կրեբսը կարդում է: Պատերազմի մասին գրքի ընթերցանությունն այն եզակի ցանկություններից է, որ հետաքրքրում է նախկին գինվորին:

Կրեբսն անտարբեր է ամեն ինչի նկատմամբ, ինչ կատարվում է իր տանը, իր հայրենի քաղաքում, նա չունի ոչ մի գործ, ոչ մի զբաղմունք: Նրան դուր է գալիս միայն պատերազմի մասին գիրք կարդալը, քանի որ դա իրեն տեղափոխում է անցյալ, պատերազմական կյանք: Եվ դա նրան դուր է գալիս ոչ այն պատճառով, որ այդ կյանքն ավելի լավն է եղել, այլ այն պատճառով, որ դա իրենն է եղել, իսկ ներկան, որում նա հիմա ապրում է, իրեն խորթ է:

Ինչ-որ առումով նա դեռ գինվոր է մնացել և դեռ չի կարողանում ազատվել պատերազմի ազդեցությունից: Գիրքը խորհրդանշում է հենց դա՝ Կրեբսի օտարությունը ներկա կյանքին և կապը անցյալի հետ: Գիրքն այս պատմվածքում դառնում է իրավիճակային խորհրդանիշ: Գիրքը խորհրդանշում է Կրեբսի՝ պատերազմը հետևում թողնելու անկարողությունն ու նախկին կյանքը շարունակել չկարողանալը: Նա չի կարողանում ամբողջությամբ հասկանալ այն փորձությունը, որի միջով անցել է, և հիմա հուսահատորեն փորձում է հասկանալ այն դրսից:

Եվ վերջապես գիրքը խորհրդանշում է պատերազմի ավերիչ և երկարատև ազդեցությունը մարդու վրա, որն անցել է պատերազմի արհավիրքների միջով:

Պատերազմի սարսափներն ամայացրել են նրա հոգին, թուլացրել նրա զգայա-
րանները, դարձրել անտարբեր շրջապատի հանդեպ: Անգամ այն ժամանակ, երբ
Կրեքսի մայրը հարցնում է նրան, թե արդյոք Կրեքսը սիրում է իրեն, նա պատաս-
խանում է՝ որ ինքը չի սիրում ոչ մեկի (Hemingway 1961:152): Հետո, երբ մայրը
սկսում է լաց լինել, Կրեքսը մոտենում է մորը, համբուրում, ներողություն խնդրում
և ասում, որ սիրում է: Բայց սա ոչ թե նրա համար, որ իսկապես սիրում է, և որ «ո-
չը» եղել է պատահական, նյարդային ասված խոսք, այլ նրա համար, որ նա խղճում
է մորը: («Նա խղճաց իր մորը և ստիպված ստեց նրան» (Hemingway 1961:152):

Խորհրդանշական իմաստ ունի նաև այն, որ Կրեքսը գիրքը կարդում է տան
մուտքի դիմաց նստած: Սա նշանակում է, որ նա երկու աշխարհների մեջտե-
ղում է, անցյալի և ներկայի միջև, պատերազմի և հետպատերազմյան կյանքի
միջև: Գրականագետ Մաքսուել Գասպարը նշում է, որ Կրեքսը փողոց դուրս
գալու փոխարեն, աշխարհին հետևում է շքամուտքից, այսինքն աշխարհին նա-
յում է իր դիտանցքից և տեսանկյունից (Geismar 1961:46):

Պատմվածքում խորհրդանշաններ են նաև քարտեզները: Նա կուզեր, որ գրքե-
րում ավելի շատ քարտեզներ լինեին, քանի որ քարտեզները հաստատուն են,
շատ որոշակի, դրանք փոփոխման ենթակա չեն, դրանք երբեք չեն փոխվի այն-
պես, ինչպես փոխվել է իր հայրենի քաղաքը:

Պատերազմը թուլացրել է անգամ սիրո զգացմունքը մոր հանդեպ: Պատե-
րազմի մասին գիրք կարդալը նրան ավելի էր դուր գալիս, քան մոր հետ զրուցե-
լը: Մյուս կողմից ընտանիքի անդամները ևս չեն ընկալում Կրեքսին: Նրանք
չգիտեն, թե ինչ արհավիրքների միջով է անցել Կրեքսը, ինչ սարսափներ է տե-
սել պատերազմում, և չեն հասկանում, որ այդ ամենը չէր կարող անհետևանք
անցնել հերոսի կողքով, չէր կարող հոգեբանական հարված չհասցնել նրան:
Ընտանիքը ճանաչում է նախկին Կրեքսին և ուզում, որ նա իրեն նախկինի պես
պահի, մինչդեռ այդ Կրեքսն արդեն գոյություն չունի:

Պատմվածքի մյուս խորհրդանշաններից մեկը հերոսի՝ Հարոլդի հոր մեքենան
է: Հարոլդի համար այն ունի այլ, իսկ նրա ծնողների համար մեկ այլ խորհրդան-
շական իմաստ: Մինչև պատերազմ մեկնելը նա իրավունք չունեի մեքենայից
օգտվելու, քանի որ հոր աշխատանքի համար այն մշտապես անհրաժեշտ էր:
Պատերազմից վերադառնալուց հետո, երբ ծնողներն առաջարկում են նրան
վարել մեքենան, նրա համար արդեն միևնույնն է, նա ոչ մի արձագանք չի տա-
լիս: Ծնողների համար մեքենան իրենց տղային նոր ապագա տանող ճանա-
պարհն է: Եթե նա սկսի վարել մեքենան, ապա դուրս կգա քաղաք, աշխատանք
կփնտրի, աղջիկների հետ կշրջի, վերջապես ինչ-որ մի աննշան փոփոխություն
կմտնի Հարոլդի առօրյայում:

Իսկ Հարոլդի համար մեքենան անցյալի հետ կապող խորհրդանիշ է:
Պատմվածքի սկզբում հեղինակը նշում է, որ ոչինչ չի փոխվել, նույն մեքենան է,
նույն վայրում կանգնած («Մեքենան միշտ կանգնած էր Առաջին ազգային բան-
կի շենքի դիմաց, որի երկրորդում հարկում իր հոր գրասենյակն էր: Հիմա, պա-
տերազմից հետո, կրկին նույն մեքենան էր» (Hemingway 1961:146-147):

Ոչինչ չի փոխվել, փոխվել է միայն այն, որ ծնողներն ուզում են, որ տղան
սկսի օգտվել մեքենայից: Այն, ինչ ծնողների կարծիքով իրենց որդուն կտանի
ապագա, տղայի համար վերադարձ է հետ՝անցյալ: Պարզապես Հարոլդը չի ու-
զում, ցանկություն չունի որևէ բան փոխելու իր կյանքում, անգամ, երբ հարցը
կենցաղային է և վերաբերում է մեքենային:

Նույն վերաբերմունքը նա ունի նաև աղջիկների հանդեպ: Խորհրդանշական իմաստ ունեն պատմվածքում նաև աղջիկները: Միակ փոփոխությունը, որ Հարուղը նկատում է քաղաքում, դա ամերիկացի աղջիկներն են, որոնք շատ են գեղեցկացել: Եվ չնայած դրան, նա շարունակում է մտածել ոչ այնքան համակրելի գերմանացի և ֆրանսիացի աղջիկների մասին, ինչը ևս մեկը անգամ վկայում է այն մասին, որ պատերազմը դեռևս ազդեցություն ունի նրա վրա, այլև ցույց է տալիս անցյալին հրաժեշտ տալու և ներկայում իրեն վերագտնելու նրա անկարողությունը:

Թեև նա կարծում է, որ կարճ կտրած մազերով ամերիկացի աղջիկներն ավելի գեղեցիկ են, քան ֆրանսուհիներն ու գերմանուհիները, բայց նախընտրում է մտածել վերջիններիս մասին, քան փորձել հարաբերություն սկսել ամերիկուհիների հետ: Որովհետև հերոսի կարծիքով եվրոպացի աղջիկների հետ ամեն բան ավելի հեշտ էր, կարիք չկար ոչինչ ասելու, հարաբերությունները հաստատվում էին իրենք իրենց, առանց խոսքերի:

Իսկ ամերիկուհիների հետ ամեն բան բարդ է: Նա շատ է ուզում, որ իր կողքին այդպիսի մի աղջիկ լինի, բայց նա ցանկություն չունի գործելու, խոսելու, սիրային ինտրիգներ սկսելու: Նրա կարծիքով ընկերուհի ունենալը չարժե այդքան չարչարվել:

Պատահական չէ, որ պատմվածքի սկզբում, հերոսը նկատում է, որ հիմա ամերիկուհիներն ունեն տղայական, կարճ կտրած վարսեր, դրանք թեև գեղեցիկ են, բայց Հարուղը հիշում է, որ նախկինում այդպիսի սանրվածք միայն շատ փոքրիկ աղջիկներն էին ունենում: Այս նոր սանրվածքը խորհրդանշում է այն, որ հետպատերազմական շրջանի աղջիկները ևս փոխվել են: Իսկ ցանկացած փոփոխություն Հարուղը դժվարանում է ընդունել:

Երկու տարբեր աշխարհների յուրահատուկ խորհրդանիշներ են նաև երկու լուսանկարների նկարագրությունները՝ մինչպատերազմական լուսանկարը՝ արված քոլեջում սովորելու տարիներին դասընկերների հետ, և արդեն պատերազմական տարիներին արված լուսանկարը մարտի ընկերների հետ: Լիդսկին նշում է, որ երկու լուսանկարների վրա ընթերցողը տեսնում է երկու բոլորովին տարբեր Կրեբսների (Лидский 1978:50):

1917 թ.-ի լուսանկարում պատկերված են կերպարային առումով և հագուստով իրար նման սաներ, որոնց մեջ է նաև Կրեբսը: 1919 թ.-ի լուսանկարում ամեն բան այլ է: Հեմինգուեյը լրիվ այլ տրամադրությամբ է նկարագրում այս լուսանկարը: Կրեբսի հագուստը ճմռթված է, նրա կողքի աղջիկները տգեղ են, իսկ կուլմինացիոն պահն այն է, երբ նշվում է, որ լուսանկարն արված է Ռեյնում, սակայն քաղաքը նկարում չի երևում է: Լիդսկին նշում է, որ հենց այդ երկու լուսանկարների միջև ընկած ժամանակահատվածում տեղի ունեցածն է կանխորոշել Կրեբսի ըմբոստությունը: (Лидский 1978:50): Իսկ այդ ընթացքում տեղի էր ունեցել համաշխարհային պատերազմ:

Իրականում, սակայն, եթե խորքային նայենք, քաղաքն ու նրա առօրյան բոլորովին չեն փոխվել, ամեն բան մնացել է նույնը: Այդ Հարուղն է, որ փոխվել է, և սեփական քաղաքը նրա համար դարձել է խորթ: Նույն փողոցներն են, նույն խանութները, նույն մարդիկ, մեքենայի կայանման նույն վայրը, բայց այդ բոլորը՝ արդեն օտար նրա համար: Եվ ինքն էլ, միակ փոփոխությունը, որ նկատում է, աղջիկների սանրվածքն է:

Մենք չգիտենք, թե որպես զինվոր, նա ինչպիսի կյանք է ունեցել, հեղինակն այդ մասին չի խոսում, բայց որ այն փոխել է հերոսին, դա պարզ է:

Պատմվածքի սկզբում խոսվում է այն մասին, որ Հարոլդը սովորել է Մեթո-
դիստական հոգևոր դպրոցում: Նրա մայրը հավատացյալ կին է:

Ակնհայտ է, որ նրա մանկությունն ու պատանեկությունն անցել են հոգևոր
կյանքի, հավատի մեջ: Պատերազմից վերադարձած Հարոլդը սակայն, չի կա-
րողանում անգամ աղոթել, մայրն է աղոթում նրա փոխարեն:

Հատկանշական է, որ նա ոչ թե չի ուզում, այլ չի կարողանում.

– *Իսկ հիմա դու աղոթիր, Հարոլդ, – ասաց մայրը:*

– *Ես չեմ կարող, – պատասխանեց Կրեբսը:*

– *Փորձիր, Հարոլդ:*

– *Ես չեմ կարող:*

– *Կուզե՞ս, ես աղոթեմ քեզ համար:*

– *Այո:* (E. Hemingway “The Short Stories of Ernest Hemingway” p. 152)

Իսկ ավելի վաղ, երբ մայրն ասում է, որ Աստված աշխատանք ունի պահած
յուրքանջուրի համար, և որ Աստծո արքայության մեջ չկան «անգործ ծեռքեր»,
հերոսը կարճ պատասխանում է՝ ես Աստծո արքայության մեջ չեմ: Քննադատ
Լիդսկին նշում է, որ Կրեբսի պատասխանը պատմվածքի հանգուցային նախա-
դասությունն է (Лидский 1978:49): Սա ըմբոստություն է ընդդեմ աշխարհի, այն
նոր աշխարհի, որում նա հայտնվել է, և ոչ թե ընդդեմ ընտանիքի, եկեղեցու կամ
Աստծու: Նա չի բողոքում, դեմ չի գնում, չի ժխտում Աստծո գոյությունը, պար-
զապես իրեն Աստծո հետ կապող ոչինչ չի զգում արդեն: Պատերազմը Կրեբսի
մեջ բթացրել է նաև հավատի զգացումը, իսկ իր ընտանիքում դեռ մնացել է նույն
խորը քրիստոնեական հավատի մթնոլորտը: Դա է պատճառը, որ նա համա-
ծայնվում է աղոթել, ոչ թե իր, այլ մոր համար:

Պատերազմի միջով անցած մարդն արդեն օտար է այն քաղաքում, որը հա-
զարավոր կիլոմետրերով հեռու է պատերազմից: «Ջինվորի տունը» պատմված-
քի հերոսը փնտրում է իր քաղաքը, այն քաղաքը, որտեղ իրեն կհասկանան:
Կապ չունի, թե որտեղ ես դու ծնվել և մեծացել, որտեղ է ապրում քո ընտանիքը,
հերոսի համար իր քաղաքն այն քաղաքն է, որտեղ ինքն իրեն օտար չի զգա:

Պատմվածքի խորհրդանիշները հիմնականում հենց դա էլ նշանակում են,
դրանք օգտագործվում են ցույց տալու համար պատերազմի ազդեցությունն
անհատի վրա, և նրա օտարացումն իր նախկին կյանքից Պատահական չէ, որ
պատմվածքի ավարտին հերոսը հրաժարվում է աշխատել հոր գրասենյակում,
փոխարենը որոշում է մեկնել Կանգաս սիթի, այնտեղ աշխատանք գտնելու: Նա
փնտրում է իր քաղաքը:

Եզրակացություն

Վերլուծելով այս ամենը՝ հանգում ենք այն եզրակացության, որ Հեմինգուեյն
իր «Ջինվորի տունը» կարճ պատմվածքում խորհրդանիշների միջոցով ցանկացել
է ցույց տալ պատերազմի ավերիչ հետևանքներն անհատի կյանքում, նրա օտա-
րացումը շրջապատից: Խորհրդանիշներն այս պատմվածքում պատկերում են հե-
րոսի հեռացումը հասարակությունից, ընտանիքից, ներկա աշխարհից: Պատե-
րազմական նկարագրություններ չկան, և հետևաբար չկան նաև պատերազմա-
կան իրավիճակներ նկարագրող խորհրդանիշներ, սակայն առկա են պատերազ-
մի ազդեցությունն ու հետևանքները պատկերող խորհրդանիշներ, որոնք «Ջինվո-

րի տունը» պատմվածքում վեր են հանում բոլոր այն խնդիրներն ու խոցելի կողմերը, որ բերում է հետպատերազմական կյանքը և ցույց են տալիս, որ պատերազմը, եթե անգամ չի սպանում մարդուն ֆիզիկապես, ապա սպանում է հոգեպես:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Лидский, Ю.Я (1978) *Творчество Э. Хемингуэя*. Киев: “Науков думка”.
2. Benson, J.J. (1975) *The Short Stories of Ernest Hemingway Critical Essays*. North California: Duke University Press.
3. Geismar M. (1961) *Writer in Crisis, The American Novel, 1925-1940*. New York.
4. Lewis, R.W. Jr. (1975) *Hemingway’s Concept of Sport and Soldier’s home*. // The Short stories of Ernest Hemingway Critical Essays. / Ed. by Jackson J. Benson. Durham, North Carolina: Duke University Press.
5. Meyer, M. (2005) *The Compact Bedford Introduction to Literature*. New York: Bedford Available at: <<http://luisaliterature.blogspot.com/2010/04/symbolism-in-hemingways-soldiers-home.html>> [Accessed March 2015].
6. Putnam, Th. (2006) *Hemingway on War and Its Aftermath*. // Prologue magazine. Vol. 38. Available at: <<http://www.archives.gov/publications/prologue/2006/spring/hemingway.html>> [Accessed March 2015].

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

1. Hemingway E. (1961) *The Short Stories of Ernest Hemingway*. New York: Charles Scribner’s Sons

Тема и символы войны в рассказе Э. Хемингуэя «Дом солдата»

Тема войны нашла широкое отражение в американской литературе 20-ого века. Она была доминирующей темой в малой прозе Э. Хемингуэя. Автор статьи показывает, как Хемингуэй с помощью символов описывает послевоенную жизнь, ее необратимые последствия в жизни героя. Статья показывает также, как с помощью символов выявляются переживания, чувства и душевное состояние героя, его отчуждение от мира и общества.

The Theme and the Symbols of War in Hemingway’s Short Story “Soldier’s Home”

The theme of war has found its extensive reflection in the 20th century American literature. It is a dominant theme in Hemingway’s prose. The author of the article discusses Hemingway’s symbolic description of the post-war life and the irreversible effects of the war on the hero’s life. The article also reveals the hero’s emotions, feelings and state of mind through symbols as well as the hero’s estrangement from the world and the society. The hero’s complicated relationship with his family and himself is depicted through the symbols on the background of post-war life.